ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 39

«13» 05 2020թ. ք. Երևան

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (ԵՐԿՐՈՐԴ ՔՆՆԱՇՐՋԱՆ) ԳՆԱՀԱՏԵԼՈՒ, ԻՍԿ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2020 թվականի հունվարի 25-ի թիվ ԿԽ-001/20/4 որոշմամբ հաստատված՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2020 թվականի ուսուցման ծրագրով նախատեսված՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները (երկրորդ քննաշրջան) գնահատելու, իսկ արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար, համապատասխանաբար՝ գնահատման և բողոքարկման հանձնաժողովներ ձևավորելու անհրաժեշտությունից, հիմք ընդունելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց 2020 թվականի մասնագիտական պատրաստման ընթացքում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքները (երկրորդ քննաշրջան) գնահատելու համար ձևավորել գնահատման հանձնաժողով հետևյալ կազմով՝

Գևորգ Բաղդասարյան - Երևան քաղաքի դատախազ,

Կարեն Բիշարյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ,

Միեր Մկրտչյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ,

Դավիթ Կարապետյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ,

Շուշանիկ Իսրայելյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ:

2. Դատախազների թեկնածությունների 2020 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման քննության արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորել բողոքարկման հանձնաժողով հետևյալ կազմով՝

Դավիթ Մելքոնյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ,

Արմեն Մարուխյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Արդարադատության ակադեմիայի ռեկտորին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ